№ 189 Նոյեմբերի 1 (13) 1879 Նոյեմբերի 1 (13) № 189

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անգլիան ինչ շահ ունի։—Ներքին տեսութիւն։ Նամակ Դիլիջանից։ Նամակ Մ.-Ղարաքիլիսայից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։—Խառն լուրեր — Յայտարարութիւններ — Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Русское слово։

ԱՆԳԼԻԱՆ ԻՆՉ ՇԱՀ ՈՒՆԻ

—

I

Եւրոպական քաղաքականութիւնը չէ ընդունում պլատոնական սէր. նա առաջնորդվում է միմիայն գործնական հաշիւներով և նիւթական շահերով։

Հարկաւոր է միայն մի անցաւոր հայեացք գցել արևմտեան Եւրոպայի ամենալուսաւորված երկիրների պատմութեան վրա, հարկաւոր է աչքի անցնել թէ նրանք, մարդասիրական սկզբունքները յայտնելուց յետոյ, ինչպէս են վարվել փոքր ազգերի վերաբերութեամբ,—և մենք կը համոզվենք որ քաղաքականութեան մէջ չը կայ ոչ սէր, ոչ էլ մարդասիրութիւն։

Վ՞եր առնենք այն երկիրը, որ իրան միշտ համարել է քաղաքակիրթ ազգերի առաջնորդ, մարդկութեան մէջ ազատամիտ գաղափարների յայտնող, ճնշված ազգերի պաշտպան, երևելի Ֆրանսիան... Բաւական է յիշել Նապոլէոն I-ի հրէշաւոր, արիւնահեղ պատերազմները և ազատութեան անունով երկիրների նուաճելը և բռնաւորութեան տակ ճնշելը, բաւական է յիշել թէ ինչ արաւ Ֆրանսիան Նապոլէոն III-ի ժամանակ Մէկսիկայի հետ, ինչպէս նա իբր Իտալիայի ազատութեանը համակրելով, զօրք էր պահում Հռոմի մէջ և այդ զօրքերին հրամայում էր հրացաններ արձակել Իտալիայի ազատութեան համար կռուողների դէմ, ինչպէս իրան անկեղծ ձևացներով Ֆրանսիան պատերազմ յայտնեց Աւստրիայի դէմ Իտալիային ազատելու համար, բայց պատերազմից յետոյ իրան սեփականացրեց Իտալիայի երկու ահագին նահանգները՝ Նիցցա և Սավոյա... Այլ չենք խօսում արևմտեան միւս պետութիւնների մասին՝ Գերմանիայի, Աւստրիայի, կամ Անգլիայի մասին, որոնք շատ նուաճումներ, շատ ճնշումներ են գործել ազատութեան անունով... Ամենքը գիտեն թէ ինչ բարբարոսութիւններ էր գործում Անգլիան Հնդկաստանում։

Շատ ժամանակ չէ որ Անգլիան պաշտպանում էր Թիւրքիային, թերահաւատութեամբ էր վերաբերվում դէպի թիւրքաց քրիստոնեաների դառն վիճակը,—իսկ այժմ յանկարծ սպառնում է Թիւրքիային որ դահընկէց կանի սուլթանին, եթէ ասիական Թիւրքիայի քրիստոնեաներին չը տրվեն ռէֆորմներ.... Եւ դեռ գտնվում են միամիտներ, որոնք կարծում են որ Անգլիան անկեղծ է, որ նա ճշմարիտ ցանկանում է հոգալ քրիստոնեաների վիճակի մասին։ Գտնվում են միամիտներ, որոնք կարծում են, որ քաղաքականութեան մէջ կարող է լինել պատոնական, իդէալական սէր....

Այդ տեսակները կամ չեն իմանում պատմութիւնը, կամ չեն հետևել վերջին քաղաքական անցքերին, կամ ծանօթ չեն Անգլիայի նախորդ գործունէութեանը Փոքր-Ասիայում։

Անգլիան, Ռուսաստանի այդ դարևոր թշնամին, միշտ նայել է Թիւրքիայի վրա, որպէս մի զինուորական պետութեան վրա, մի զինուորական ոյժի վրա, որ Ռուսաստանի սահմանակից լինելով, կարող է գործ դնել Ռուսաստանի դէմ պատերազմելու համար։

Այժմ, քանի գնում է Թիւրքիան թուլանում է, այլ ևս նրա վրա մեծ յոյս դնել չէ կարելի։ Նա սպառել է իր ոյժերը Ռուսաստանի դէմ վերջին պատերազմի ժամանակ, իսկ այժմ նա թէ բարոյական և թէ ֆինանսական սարսափելի ճգնաժամի մէջն է։

Անգլիան գուշակեց որ Թիւրքիան հետզհետէ ընկնելու է այդ դրութեան մէջ և դեռ Բեկոնսֆիլդի կոնգրէսի ժամանակ իր խնամակալութեան տակ վերցրեց Թիւրքիային, իբր թէ նրա ամբողջութիւնը պաշտպանելու համար։ Բայց Թիւրքիայի տեղը հրապարակապէս բռնել նա դեռ ևս չէր համարձակվում. ահա այժմ ներկայանում է մի յարմար րոպէ. Գերմանիան և Աւստրիան միմեանց մէջ դաշնադրութիւն են կապում, Աւստրիան յանձն է առնում խնամակալութիւնը Բալկանեան թերակղզու քրիստոնեաների վրա,—իսկ Անգլիային ազատ ասպարէզ է բացվում Թիւրքիայի ասիական նահանգներում...

Բայց գուցէ Անգլիան այդ բոլորը անում է քրիստոնեաներին պաշտպանելու համար, կասեն մեզ։

Հետևեալ յօդուածով յոյս ունենք ապացուցանել որ դա սխալ միտք է։

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

„РУССКОЕ СЛОВО“

—

Նոր դասագիրք ռուսերէն լեզուի, հայ ուսումնարանների համար, աշխ. Կամսար Տէր-Դաւթեանց։ Երրորդ տպագրութիւն, գինն է 45 կ.։

—

Ուրախանում ենք մենք, հայերս, ամեն անգամ, երբ լսում ենք հայերէն լեզուով որ և է նոր դասագրքի հրատարակութեան մասին. և ինչպէս չուրախանալ, երբ մենք անթիւ ուսումնարաններ ունենք, և օրից օր նրանց թիւը աւելանում է, իսկ դասագրքեր համարեա չը կան։ Մենք ևս նոյնպէս ուրախացանք, երբ իմացանք, որ տպվում է պ. Տէր-Դաւթեանցի «Русское Слово» դասագիրքը նշանաւոր փոփոխութիւններով և յաւելուածներով։ Վերոյիշեալ դասագիրքը արդէն հրատարակված է և այժմ կաշխատենք մենք քննել, թէ որքան արդարացրեց նա մեր յոյսերը։

Իսկապէս խօսելով այս գիրքը իր էական մասերով մնացել է նոյնը, ինչ որ էր առաջ. ճիշդ է, մի քանի նոր յօդուածներ ևս աւելացրած են գրքի երրորդ բաժնի մէջ, (8 յօդուածներ) և «О рыбакѣ и рыбкѣ» առակը, որը տպված է 30 երեսների վրա։ Բայց, ներողութիւն, գրքի մէջ երկու նորութիւններ ևս կան. առաջին երեսի վրա մենք տեսնում ենք մի պատկեր, որը ներկայացնում է Ադամ և Եւայի արտաքսումն դրախտից, իսկ գրքի վերջում մենք տեսնում ենք ժամանակի և չափի աղիւսակը և այն, բազմապատկութեան աղիւսակով (?)։

Պէտք է ասած որ ռուսաց լեզուի դասագրքի մէջ այս բոլորը մի տեսակ աւելորդ հնոտիներ են։ Բայց ոչ,—այս յաւելուածները երևում են աւելի խոր նշանակութիւն պէտք է ունենան. գրքի առաջին երեսի վրա նկարած պատկերը մեզ այն բանն է յիշեցնում, որ աշխատաւոր կեանքի լուծը կրելու ենթարկված թշուառ մարդը, պակաս քրիստինք չը պիտի թափէ պ. Կամսար Տէր-Դաւթեանցի դասագրքից մի որ և է բան դուրս բերելու համար. իսկ գրքի վերջը աւելացրած բազմապատկութեան աղիւսակը և ժամանակի չափը կօգնեն այս դասագրքի վրա սովորող աշակերտին՝ հաշուել թէ որքան օրեր, ամիսներ և տարիներ իզուր կորցրել է նա ռուսաց լեզուն այս դասագրքի վրա սովորելու համար։

«Русское Слово» դասագիրքը երեք մասերի վրա է բաժանված. առաջին բաժնի մէջ մտնում են օրինակներ ընթերցանութեան մէջ վարժվելու համար։ Այս բաժնի մէջ իսկապէս մենք տեսնում ենք նշանաւոր փոփոխութիւններ։ Այլ ևս ռուսաց բնագրի տողերի մէջերքումն չը կայ հայերէն թարգմանութիւնը, որի պատճառով նախկին հրատարակութիւնների երեսները ներկայացնում էին մի տեսակ գոյնզգոյնութիւն, որոնք բոլորովին դժուարացնում էին մանուկներին՝ ընթերցանութեամբ պարապել։ Պէտք է ասած, որ այս բաժինը աւելի բաւականացուցիչ է, քան թէ մնացած երկու բաժինները, չը նայելով որ այստեղ ևս կան մի քանի աննշան սխալներ։ Ցառերի հետ կարգով օրինակներ են բերված տառերի արտասանութիւնը ցոյց տալու համար. այս օրինակների մէջ անճշդութիւններ կան՝ օրինակ, «Давыдъ» կարդացվում է ոչ թէ որպէս «Դաւիթ», այլ Դավիդ, «щи» ոչ թէ «ըշշի», այլ «չշի» և այլն։ Մի և նոյն ժամանակ մենք չենք կարող հասկանալ, թէ ինչու այս օրինակներից մի քանիսները հայերէն են թարգմանված։ Ցեռոյ բառերի կոշտ և փափուկ վերջաւորութեան հետ (ъ և ь) մենք ծանօթանում ենք § 18-ում, այն ինչ նրանք աւելի առաջ են պատահում՝ (§ 17-ում) столъ, лошадь և այն բառերի մէջ։ Վերջապէս այս բաժնի վերջին §§-ում ինչ պատճառով—մի քանի բառերը վանկերի վրա են բաժանված, իսկ միւսները ոչ, չենք հասկանում։

Դասագրքի երկրորդ բաժինը ամենաէականն է, և այդ պատճառով ամենալաւն է։ Այս բաժինը 29 դասերից է բաղկացած։ Մենք միայն մէկ դասը կաշխատենք քննել, որովհետև բոլոր դասերը բոլորովին միակերպ են։ Օրինակի համար մենք առաջին դասը վերցնենք։ Առաջին դասը, ինչպէս և միւս բոլոր դասերը 6 բուբրիկների վրա է բաժանված. 1) «Дѣтскія очки» պատմութեան ռուսաց բնագիրը, 2) բառ առ բառ թարգմանութիւն։ Հէնց մի և նոյն ռուսաց բնագիրը և իւրաքանչիւր բառի տակ համապատասխան հայերէն թարգմանութիւնը. 3) փոխադարձ թարգմանութիւն՝ ձախ կողմը հէնց մի և նոյն ռուսերէն բնագիրը, իսկ աջ կողմը հայերէն բառացի թարգմանութիւն, 5) հայերէն ազատ թարգմանութիւն (?!), 4) խօսակցութիւն՝ ձախ կողմը դրած են հարցեր ռուսերէն և մի և նոյն հայերէնը փակագծերի մէջ, իսկ աջ կողմը պատասխաններ, և 6) նախադասութիւններ։ «Дѣтскія очки» պատմութեան մէջ պատահած բառերից կազմված են մի քանի նախադասութիւններ, և մի և նոյն տեղը կողքին հայերէն բառացի թարգմանութիւնն է բերված։—Նրանցից բոլորովին աւելորդ են, ոչ թէ միայն աւելորդ են, բայց և վնասակար են 2, 3, և 4։ 2)-ի մէջ, ինչպէս մենք ասացինք, ռուսաց բնագիրն է բերված և նրա տակը հայերէն թարգմանութիւնը։ Հետաքրքիր է իմանալ, ո՞ւմ համար է այս բաժինը—վարժապետի թէ աշակերտի համար։ Եթէ այս վարժապետի համար է, այն ժամանակ, պէտք է խոստովանած, որ բոլորովին աւելորդ էր մի և նոյն տեղը այս թարգմանութիւնը բերել, որը անդադար աշակերտի աչքի առաջը լինելով, ազատում է աշակերտներին բառերը յիշողութեան մէջ պահելու։ Կը հարցնի վարժապետը, նա իսկոյն գրքի մէջ կը նայի։ Ներկայացրէք ձեզ աշակերտների սովորական դրութիւնը. նստած են աշակերտները, նրանց առաջ դրված են բացված գրքերը. մէկը նրանցից, դիցուք, բարձր է կարդում, իսկ միւսները հետևում են։ Աշակերտը կարդում է. «Говоритъ отецъ»։ Ի՞նչ է «говоритъ», հարցնում է ուսուցիչը։ Աշակերտը կսմենում է գրքի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԻԼԻՋԱՆԻՑ

—

18 հոկտեմբերի

Մեր մէջ, առհասարակ, երբ որ մարդ չունի ոչինչ ուսում, ոչինչ գիտութիւն, գիւղի տանուտէրը և իւրաքանչիւր գիւղական ստորին պաշտօնեաները հարստահարում է, նեղացնում, չարչարում է, այն ինչ նա, գիւղացին, ամեն մի անիրաւացի պատիժն ու պատուհասը իրաւացի է համարում, որովհետև իր հայրը, իր պապը.... նոյն դրութեան մէջն են գտնվել, նոյն պատիժներն են կրել, ուրեմն ինքն ինչով նրանցից բարձր է, որ իր տանուտիրոջ պարապմունքն անպատշաճ ու անտեղի համարէ։ Բայց չէ, երբեմն նրա բերանից լսում ես ախ ու ոխ, տրտունջներ. բայց երբ կամենաս ցոյց տալ—հասկացնել, որ նրա վիճակն այդ դրութեան մէջ չը պէտք է լինէր, այլ այլապէս, նա իսկոյն կը մոռանայ իր կրած անարդէս, նա իսկոյն կը սկսի իր ստրկացած տեղով գանգները ու կը սկսի պաշտպանել նեղիչներին, հարստահարողներին, թէ «մինչ անենք քեօխվէն, սուղբեն եթէ թակեն ոչ, ջարմայ չի խլեն, գոմը չի քցեն, ոչ ով անդաշ չի դնիլ. բա էլ ինչ քեօխվութիւն ու ռնաթութիւն կըլի»։ Այդ անպաշտպան մարդը՝ եթէ Աստուած մի արասցէ, ձեռք բերէ մի փոքր ինչ իրաւունք, մեծութիւն, նա ամենևին չի յիշի իր քաշած սև օրերը, այո, նա կը մոռանայ անցեալը և միայն կաշխատէ ներկայից «բեռը բռնել», կը մոռանայ լվոտ և դարչահոտ գոմերը (քանտարկութեան տեղի)։ Այժմ նա այլ ևս ոչինչ կարեկցութիւն, ցաւակցութիւն չէ զգում, եթէ կամենայ ևս այդ՝ դարձեալ իրան չի թոյլ տայ, որովհետև նա թէև այդ իշխանութեան մէջ պէտք է մնայ մի ամենակարճ ժամանակամիջոց, բայց այդ միջոցը նրա կեանքի ուրախութիւնն ու քաղցրութիւնն էր նրա կեանքի «զարունն է»։ Եթէ այդ միջոցում հոգս չը քաշի յուսալի օգուտը քաղելու, ուրեմն նրա ա ս տ ղ ը թ ե ք վ ե լ է, նա չէ կարողացել ժամանակը ճանաչել։ Այդպիսի ստորին աստիճանի պաշտօնեան հասարակութեան համար պատիժ է, բեռն է, տ իզ է (տիզը փոքրիկ միջատ է, որ կենդանիների և մինչև անգամ մարդու մսիցը կպչում է, գլուխը մսի մէջ ամուր կերպով թաղում և մինչև իր մեծանալ—պառաւելը ծծում—քամում է խեղճ կենդանու արիւնը), որ հասարակութեան արիւնը քամում է։ Նա միշտ պահանջում է, միշտ թ ն թ լ ո ւ մ, առնում տանում է, բայց երբէք չէ կշտանում. գրպանի բերանը լայն, իսկ ներսը անսահման ծով է, որքան մտնի, ինչ մտնի՝ կանհետանայ և այնուհետև լոյս աշխարհ չի տեսնի։

Այսպիսի պաշտօն ունենալ ցանկանում են միայն այն մարդիկը, որոնք ունեն ստոր բնաւորութիւն, որոնց երեսի կաշին կօշիկների տակից շատ և շատ ամրութիւն ունի՝ նա պէտք է լինի այնպիսի մարդ, որ ժողովուրդը նրանից երկիւղ կրէ, նրա առաջին դողայ. եթէ նրան յափշտակէ, կեղեքէ, նա, ժողովուրդն իրաւունք և ձայն չունենայ բողոքելու, արդարութիւն խնդրելու և ցոյց տալու, որ, երբ անասունին նեղացնում, ցաւեցնում են, նա բղաւում—աղաղակ է բարձրացնում, այն ինչ ինքը մի անձայն ոչխարի նման ոչինչ ձայն, ծպտուն չէ արձակում, որովհետև երկիւղ է կրում, թէ մի գուցէ այն անդութի ձեռքից աւելի վատթար տեղն ընկնի, և, այդ լռելով, իւրաքանչիւր թոկից փախած՝ խաղաղ, խեղճ ժողովրդի գլխին ինչ օյիններ ասես, որ չէ խաղում։

Ժողովուրդին հարստահարողների մէջ առաջին տեղն է բռնում անտառապահը իր ստորադրեալ անտառապահ պաշտօնեաներով։ Ղազախ գաւառը, որ բաղկացած է բազմաթիւ—թէ հայ և թէ թուրք,—մի անտառապետի իրաւասութեան տակն է գտանվում. նա նստում է Դիլիջանում։

Պարոն Բակը (այդպէս է անտառապահի մականունը) արդէն յայտնի է «Մշակի» ընթերցողներին, թէ 2—3 տարի սրանից առաջ և անցեալ գարնանը ինչ նեղութիւններ տուեց, մանաւանդ Ջալալ-օղլեցոց. նա տեսնելով, որ իր գիտաւորութիւնները ոչ մի կերպով յաջողութեամբ առաջ մղել չը կարողացաւ, սկսեց թուրք ազգաբնակութեանը գրգռել հայերի դէմ և այդ երկու դրացի ազգերի մէջ սարսափելի կռիւներ յարուցանել և դրանով միայն յագեցնել իր սիրտը։ Բայց չէ, նա հանդիստ իր նպատակին հասնել չէ կարող, մինչդեռ նրա գործածները մութը տեղը ևս նմարվում են։ Պարոն Բակի կատարած գործերի երրորդ նկարագրութիւնն է, որ ես պիտի կատարեմ։ Տեսնելով նրա կատարած գործերը, չեմ կարող լռութեան տալ, վասն զի դէպի տգէտ ժողովուրդն ունեցած կարեկցութիւնս թոյլ չէ տալի լռելու։

Անտառապետի Ղազախում պաշտօն ընդունելը քանի մի տարի է. երբ նա եկաւ այստեղ, թէ անձնական և թէ նիւթական խիստ հիւանդութեան մէջ էր, բայց այժմ Դիլիջանի առողջարար օդն ու ջուրը վերականգնել են նրա առողջութիւնը, իսկ հասարակութեան քսակները—նրա նիւթական միջոցները, նորա աղքատ քսակը։

Նորա կատարած գործերը սարսափեցնում են... միթէ մի մարդ, այն էլ լուսաւորեալ մարդ, իրան թոյլ պէտք է տայ այնպիսի գործեր կատարելու, որ այս պարոնը կատարում է։ Օրինակի համար.

Պ. Ա....եանցը իր տների շինութեան համար վերցնում է փայտ կտրելու տոմսակ և կտրում այնքան, որքան իրաւունք ունէր կտրելու, բերում շինութեան մօտ ածում և տոմսակը տանում անտառապետի մօտ, որ մարդ ուղարկէ գերանները կնքելու։ Տոմսակը թող այստեղ, ասում է անտառապետը, չուտով Յովհաննէսին կուղարկեմ։ Փայտատէրը գնում է սպասում—սպասում, բայց ոչ ոք չէ երևում, ուստի փայտատէրը ճարահատեալ դիմում է անտառապետին՝ ուշանալու պատճառն իմանալու, բայց այժմ պ. Բակը նրանից տոմսակ ընդունելը բացասում է և այժմ իր հաւատարիմ Յովհաննէսին ուղարկում գերանները հաշուելու և ստանալու թէ դրանց կտրելու և թէ տուգանքի գինը, որ համարձակվել են առանց իր գիտութեան ու տոմսակի՝ գողութիւն անել, թէև այդ բանը կատարվել է նոյն իսկ Դիլիջանում իր տան մօտ, ուրեմն այդպիսի տեղը գողութեամբ փայտ բերել անհնար է։ Սոյն տեսակ օրինակներ կրկնվել են և այլ գիւղերում։

Մի պարոն, որ նոյն տեսակ զրպարտութեանց համար անտառապետի կողմից տուգանքի է ենթարկվել և 500 ռուբլ իզուր չը վճարելու համար դատ բացարել նախ՝ գաւառական դատարանումը և ապա նահանգականում և գործը յաջողութեամբ տարել, հակառակորդին յաղթել, այժմ այդ պարոնին ոչ միայն փայտ չէ տալիս, այլ և ուղարկած խնդրագիրն անպատուութեամբ պատռտում և չպրտում է, իսկ բերողին էլ մի քանի չաղ յիշոցներ բարձում և այնպէս է ճանապարհ դցում բղաւելով. «ձեզ համար անտառում գերան փայտ չը կայ։ Ասացէք խնդրեմ, ինչ անի այն խեղճ մարդը....

Նրան մնում է միայն մի ելք, այն է իր խորամանկութիւնը. փայտ կամեցած ժամանակ՝ իսկոյն օտարի ստորագրութեամբ, անունով և օտարի միջոցով է ձեռք բերում փայտ։

Մէկ անտառի կաղին ու հաճարը վաճառում է մի գիւղացի խոզատէրների և ոչխարատէրների վրա. գնում են այդ մի և նոյն տեղը և ուրիշ գիւղացիք՝ առանց մի համբաւ ունենալու առաջինների մասին, ուստի իւրաքանչիւրը իր տումսով առնում է անասունները և գնում անտառը, և այդպէս նրանց մէջը ծագում է սարսափելի կռիւ, միմեանց ծեծում ջարդում են, իսկ խոզերին, ոչխարն կարողանում են հրացանով և չներով ջուր են անում, իսկ պ. Բակը զուարճանում է այդ անբնական խաղի և խաղացողների վրա։

Դիլիջանում անպատճառ ձեր ուշադրութիւնը կը դրաւէ պ. անտառապետի երկայնաձիգ տունը իր պարտիզով և հիանալի աղբիւրով։

Իւրաքանչիւր 10—15 գիւղի վրա մի անտառապահ է դրած, իսկ իւրաքանչիւր երկու գիւղի վրա մի զ ա ր ա ւ ու լ (փոքր անտառապահ)։ Դոքա արդէն ապրում են ժողովուրդի մէջ՝ իրանք և իրանց ձիերն էլ ժողովուրդի հաշվովն է, ում տան լաւ հաւ, ճուտ, գարի, խոտ, պտղեղէն կայ դէպի ինքն է քաշում։ Այդ ահագին մարդիկը—անտառապահները տարէնը ստանում են մի ամենաչնչին դումար (80—100 ր.), բայց գիտէք, թէ ինչ միջոցներով 80 ր. շինում է քանի մի հարիւրներ, իր կողմից ինքնագլուխ ժողովուրդին քաշում և հարստահարում է։

Ա.

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԱՑԻՑ

—

15 հոկտեմբերի

Շատ անգամ հայոց պարբերական թերթերի մէջ կարդացել էի Մեծ-Ղարաքլիսա գիւղի վերաբերութեամբ զովութեան արժանի տեղեկութիւններ և նրա առողջարար օդի, պաղ աղբիւրների, արծաթափայլ առուակների, անտառապատ շղթայաշար լեռների մասին նկարագրութիւններ։ Լսել էի նմանապէս այս գիւղացոց ջանասիրութեան, ուսումնասիրութեան, մաքրասիրութեան, հիւրասիրութեան վրա տեղեկութիւններ և վերջապէս կարդացել էի տների նոր կազմակերպութեան, փողոցների մաքրութեան մասին շատ գովեստներ, բայց անձամբ անձին տեսնելու բաղդ մինչև ցայժմ չէի ունեցել։ Այժմ պատահեցայ և ամեն բան ճըշտութեամբ տեսայ և այդ պատճառաւ ցանկանում եմ մի քանի խօսք ասել այն կէտերի մասին, որոնք ինձ վրա արդարև քաղցր տպաւորութիւն թողին։ Այդ գիւղում չինում էին մի նորակառոյց հոյակապ դպրոց, որի չինութիւնը համարեա վերջացած էր և որի նմանը այսօր Ալէքսանդրապօլում էլ չը կայ։ Ի թիւս միւս աշխատաւորաց և վարդապետների՝ քրոնաչան աշխատում էին նոյնպէս և երկու պարոններ՝ Եգոր և Սօսի, որոնք ինչպէս ծանօթացրեց իմ ընկերը, հոդարարձուներից էին։ Ցիշեալ պարոնները ճանաչելով իրանց պարտականութիւնը, անձնական գործերը երեսի վրա թողած և ամեն բօպէ վարդապետների վրա կանգնած աշխատացնում են և գործիքները ձեռքերին աշխատում են։ Դպրոցը ունէր իր բոլոր յարմարութիւնները. ուսումը չուտով պէտք է սկսվէր, իսկ օրիորդաց դպրոցը արդէն պատրաստ էր։ Բոլոր բնակիչները զբաղված էին անտառապետի հարցով։ Ինչպէս պատմեցին գիւղացիք, պ. Պատկանեանցը Անի քաղաքից վերադառնալիս, ամսիս 12-ին պատահում է այս գիւղում և հաշտեցնում է հասարակութիւնը անտառապետի հետ, բայց թէ որպիսի հետևանք պէտք է ունենայ այդ հաշտութիւնը, առ այժմս դեռ յայտնի չէ։ Բարեմաղթելով կատարեալ հաշտութիւն դուրս եկանք Ղարաքիլիսից և մի քանի ժամից յետոյ մտանք Համամլի գիւղը։ Այս գիւղը համեմատելով Ղարաքլիսայի հետ՝ տեղի դրութեան օդի և առողջութեան մէջ ոչինչ զանազանութիւն չէք կարող գտնել, բայց ինչ կը վերաբերի բնակիչների կենցաղավարութեան և գիւղի կազմակերպութեան, ամեն մի ճանապարհորդ կարող է նկատել ճիշդ այն զանազանութիւնը, որ այժմ կայ և մնում է Ալէքսանդրապօլի և նրանից մօտ տասն վերստ հեռաւորութեամբ գտնված Ալվխան գիւղի մէջ։ Որովհետև երկար ժամանակ չունէի, որ այդ գիւղից մի կատարեալ տեղեկութիւն հաւաքէի, այսքանս միայն լսեցի, որ մի քանի երիտասարդներ, նախանձելով իրանց հարևան ղարաքլիսեցոց, սկսել են իրենց երեխայոց կրթութեան վրա ուշադրութիւն դարձնել, ուստի և հրաւիրել էին լուսդրաց միջոցաւ 400 մանէթ թոշակավարձով մի ուսուցիչ, որը, ինչպէս պատմում էին գիւղացիք, Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի աշակերտներից էր. ժողովուրդը կուսակցութեան էր բաժանված վարժապետի պահելու մասին, բայց ես յուսով եմ, որ ուսումնասէր երիտասարդները, մանաւանդ դիմադրելով բազմադիմի խռչնդոտներին յաղթող կը հանդիսանան։

Անցորդ

մէջ նայել, թարգմանութիւնը նայելու, վարժապետը արգելում է։ Աշակերտը չը գիտէ, այն ժամանակ ուսուցիչը դառնում է մէկ այլ աշակերտին, բայց նա արդէն ժամանակ ունեցաւ զրքի մէջ նայելու. ինչ երկար պառելու բան է։ Այդպէս շարունակվում է անդադար վարժապետին խաբելը, իսկ ուսուցիչը զեղեցիկ ճանաչելով իր դրութիւնը, ի զուր կը պատերազմի այս բանի դէմ, քանի որ աշակերտների քթի տակ կը մնի միշտ պ ա տ ր ա ս տ թ ա ր գ մ ա ն ո ւ թ ի ւ ն ը։ Նախկին ժամանակներում, շատ անգամ թարգմանութիւնները չապիկների թեքերի և ձեռքերի ափերի վրա էին գրում և այլն, և աշակերտները վարժապետից ծածուկ նայում էին այնտեղ, իսկ այժմ ինչպէս երևում է ազատութիւն է ամեն բանի մէջ....Ի՞նչ հարկաւոր է չապիկների թեքերի վրա մատիտով գրել և ծածուկ օգտվել նրանից, այժմ ինքն վարժապետը աշակերտներին այնպիսի դասագրքեր է բաժանում, որոնք բոլորովին ազատում են աշակերտներին ամենայն տեսակ հնարագործութիւններ անելուց....Այո, մենք արդ XIX դարու երկրորդ կէսումն ենք ապրում, հարկաւոր է աշակերտներին ընտելացնել այդպիսի ազատ գործողութիւններին։ Այո, եթէ ասում ենք որ այս թարգմանութիւնը հարկաւոր էր մտցնել ուսուցիչների համար (որոնք փակագծի մէջ ասելով, մեծ մասամբ այդ տեսակ օգնութեան կարօտութիւն ունեն) միայն այդ դէպքում հայերէն բառացի թարգմանութիւնը հարկաւոր էր գրքի վերջումը դնել, մի խօսքով 1) ռուբրիկայի տակ գտնվող բնագրից հեռու։ Նոյնպէս ինչ հարկաւոր է հայերէն ազատ թարգմանութիւնը։ 5) ռուբրիկայի մէջ աւելորդ են ռուսաց լեզուով պատասխանները։ Այս աշխատութիւնը հարկաւոր էր հէնց իրանց աշակերտների վրա թողնել. մի և նոյնը կարելի է ասել և 6) ռուբրիկայի մասին՝ պէտք էր հանել ռուսական ֆրազները (хорошо читать книги) և այլն, թողնել միայն հայերէն թարգմանութիւնը։ Այդպիսով աշակերտները նիւթեր կունենային թարգմանութիւնների մէջ վարժվելու համար, և անդիր չէին անի պատրաստ թարգմանութիւնները։

Ես արդէն նկատեցի, որ բոլոր 29 դասերը սարսափելի միակերպ են։

Երրորդ մասը ներկայացնում է մեզ մի հաւաքածու ոչ առանձնապէս հետաքրքիր պատմութիւնների։

Մեզ բոլորովին զարմացնում է այն բանը, որ այս գիրքը, Վրաստանի և Իմերէթիի մեր թեմական տեսուչը ընդունել է որպէս ձեռնարկ մեր ուսումնարանների համար։ Մենք բոլորովին չենք կարողանում հասկանալ, թէ ինչպէս այս գիրքը, որ ամենաայլանդակված կերպով քաղուածք է Ուշինսկու «Родное Слово» գրքից, կարող է փոխարինել նրան։ Դիցուք թէ դասագրքի պ. յօրինողը ամեն միջոց գործ է դրել գնողներ որսալու համար, բայց զարմանում ենք թէ ինչպէս պ. թեմական տեսուչը գրաւվեցաւ այդ բանով։ Ուշադրութիւն դարձրէք, ընթերցող, այդ գրքի կազմի վրա. ամենքից առաջ ձեր աչքին է ընկնում հէնց գրքի անունը՝ «Նոր դասագիրք ռուսերէն լեզուի». գիտէք, ընթերցող, ինչ է յիշեցնում սա մեզ. Թիֆլիսի բնակիչները համարեա ամբողջ տարի բաղդ ունեն կարդալ պատերի վրա կպցրած խոշոր տառերով հետևեալ յայտարարութիւնը. Только что получены обои въ магазинѣ Цатурова (նորերս Ցատուրովի խանութում աբօյներ են ստացվել) այնպէս որ երբ կամիք կարդացէք, միշտ կը կարդաք «նորերս»։ Սրանք մ շ տ ա կ ա ն յայտարարութիւններ են անուանվում, և վաճառականներին ազատում են անդադար յայտարարութիւնները փոխելուց։ Սա հասկանալի է որ շատ շահաւէտ է վաճառականների համար, բայց դուք ինչ կասէք այն գրքերի մասին որոնք անդադար «նոր» անուն են կրում, եթէ նրանք մինչև անգամ հարիւր անգամ հրատարակվէին։ Մէկ ուրիշ նորութիւն ևս կազմի վրա լատինական լեզուով վերնագրին է. «Non multa sed multum։ Քիչ, բայց լաւ։ Ա ա ինչ բէկլամ է։ Այդպիսի բէկլամներին թող դիմեն գրիգօլՇեր, մանուէլՇեր և զանազան «ներերը», մինչև անգամ վօլֆները, բայց ոչ թէ մեր գրողները....իզուր մենք ցանկանում ենք այդպիսի նորութիւններ մտցնել մեր գրականութեան մէջ։

Մեզ այժմ մնում է միայն ասել, որ գրքի գինը 45 կոպէկ չատ թանգ է. նա հեղինակին 14—15 կոպէկից աւելի չէր կարող նստել. հաշուեցէք նոյնպէս գրավաճառի ստացած 30 պրոցէնտը (?) աշխատանքի համար հեղինակին մնում է ամեն մի գրքից 16 կոպէկ։ Իսկ աշխատանքի համար իւրաքանչիւր գրքից ստանալ 16 կոպէկ, շատ շատ է, որովհետև նրա բոլոր յօդուածները քաղուած են Ուշինսկու «Родное Слово»-ից։ Ի դէպս այս քաղուածքի մասին։

Վերջապէս երբ պէտք է մենք հասկանանք, որ անվայել է այդ տեսակ օգուտ քաղել ուրիշի գրականական աշխատութիւնից, մանաւանդ որ ինքը Ուշինսկին քանի քանի անգամ յայտնել, և մինչև այժմս ևս «Родное Слово»-ի հրատարակիչները յայտնում են (տես «Р. С. годъ I. 79 г., г. II. 78 г., «Д. Міръ ч. I 78 г.) որ «ցանկի մէջ չը ստորադրված յօդուածները հեղինակին են պատկանում, որը խոնարհաբար խնդրում է չարտատպել այնպիսի հրատարակութիւնների մէջ, որոնք այն նպատակի են ծառայում, ինչ նպատակի որ ծառայում է «Родное Слово» դասագիրքը։ Ժողովրդական առածները նոյնպէս փոխարկված են յօրինողից։» Զը նայելով այս նախազգուշութեան, պ. Կամսար Տէր-Դաւթեանցը ամենայն աշխատութեամբ արտատպում է «Род. Сл.» դասագրքից համարեա իր դասագրքի մէջ եղած բոլոր յօդուածները։ Զարմանալի կոմմինիստներ ենք մենք հայերս, երբ բանը օտարի սեփականութեանն է վերաբերում։

Ճշմարիտ զարմանում եմ, եթէ որ մենք չենք կարողանում հասկանալ գրականական սեփականութեան ն շ ա ն ա կ ո ւ թ ի ւ ն ը, ինչպէս մենք դոնէ չենք վախենում տպագրութեան յայտնի օրէնքներից։ Ցաւալի և շատ ցաւալի է դրա նման փաստերը մտցնել մեր գրականութեան ժամանակագրութեան մէջ։

Կովկասեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Տիկին Արտօ, որ Նոյեմբերի 20-ին պէտք է ԹԻՖԼԻՍՈՒՄ կօնցերտ տայ, այժմ, ինչպէս հաղորդում է «Донск. Пчела» լրագիրը, Բօստովում պ. Պադիլայի հետ կօնցերտներ է տալիս։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղի հոգևոր դպրոցը շատ վատ դրութեան մէջ է։ Քաղաքի մօտ գտնված Շեմահմուտ հայաբնակ գիւղի դպրոցական գործերը աւելի լաւ են ընթանում։

—

Հաստատ աղբիւրից լսում ենք որ Կովկասում քրիստոնէութիւնը վերականգնող բարձրագոյն իշխանութեամբ հաստատված ընկերութիւնը փորձ է փորձել հիմնելու ՆՈԻԽՈՒ ուտիքական Նիժ և Վարդաշէն գիւղերում ժողովրդական ուսումնարաններ, բայց այդ հանգամանքը տեղիք է տուել մեծամեծ վրդովմունքներին լուսաւորչադաւան ուտիացիների կողմից, որոնք ունենալով արդէն իրանց ուսումնարանները Էջմիածնի հովանաւորութեան ներքոյ, աւելորդ են համարում ուրիշ ուսումնարաններ ունենալ։ Եկողները հաւատացնում են որ գործը ստացել է խիստ կծու կերպարանք և լուսաւորչադաւան ուտիացիք արդէն պատգամաւոր են ուղարկել Թիֆլիս իրանց բողոքը տեղ հասցնելու համար։

—

Պ. Գ. Խոյեցեանց խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Ձեր լրագրի ներկայ թուականի 170 համարում տպված «Երկրագործ» ստորագրութեամբ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ նամակը ի զուր մեղադրում է ինձ, որ ես իմ մօտ պահելու համար գտնված եկեղեցական գումարից «եռանդուն ու ջանասէր» գանձապահ հոդաբարձուին (պ. Աղէքսանդր Մըխիթարեանցին) չեմ տուել 200 ռուբլի նոյն եկեղեցու ուսումնարանի շինութեան համար. որով պատճառ եմ եղել շինութեան յետաձգութեանը։ Նախ՝ այդ գումարն ինձ յանձնել է պ. երեսփոխանը, որի մասին ունիմ նորան տուած մուրհակ, ուրեմն պ. գանձապահը պէտք էր իմ տուած ստորագրութիւնը կամ ինձ յետ տար առնելով երեսփոխանից, կամ նորանից ստացագիր ներկայացներ, որ ծառայէր իբրև դոկումէնտ։ Երկրորդ՝ ես պաշտօնական անձն չէի, որ իրաւունք ունենար ուղղակի իմ ղէմ բողոքելու, քանի որ լոկ փողը պահելուն էի երաշխաւոր. ով ինձ յանձնել էր, նա կարող էր յետ ստանալ։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

(Շարունակութիւն և վերջ)

«Ես կը պատմեմ Փարիզի իմ բարեկամներին այն բարեգործութիւնները, որ դուք առնում էք այստեղ—Լիօնում, ինչպէս, որ ես այստեղ ձեզ պատմում եմ այն բարեգործութիւնները, որ նրանք անում են Փարիզում։ Ես չեմ կարող ձեզ ասել թէ արդեօք այս երկու ժողովներից ո՞րն է աւելի արժանի հասարակական երախտագիտութեանը։ Մեզ մօտ միայն 500 աշակերտներ դասախօսութիւններին շարունակ յաճախելու վկայականներ ունեն, մինչդեռ պ. Լան ինձ պատմում է, որ այստեղ այդ տեսակ աշակերտների գումարը հասնում է մի հիանալի թիւ—740-ի. սա մի սքանչելի թիւ է։ Դուք էլ մեր աշակերտների նման ուսանողներ ունէք, որոնք այժմ ուսուցիչներ են դարձել։ Աշխարհահանդէսի մէջ ձեր ստացած ոսկէ մդալը և հասարակաց օգտակար հիմնարկութիւն տիտղոսն, անշուշտ ձեզ համար մի մեծ վարձատրութիւն չէ։ Դուք իրաւունք ունէիք մի աւելի մեծ պարգևի։ Ձեր նախագահ պ. Մանժէնիին և ձեր վերատեսուչ պ. Լանին պէտք է պատուէին Légion d'honneur պատուանշանով։ (Եռանդուն ծափահարութիւններ։) Եթէ պատահի որ այդ մասին խօսք բացվի մինիստրի մօտ, ես նրան կասեմ, որ դուք ինձ պարտաւորացրել էք այդ մասին, որ ես ձեր կողմանէ խօսեմ նրա հետ։ Ես բոլորովին հիացած եմ այն ընտանեկան յարաբերութիւններով որ թագաւորում է այստեղ։ Ես այստեղ իմ շուրջը միայն աշակերտներ ու ուսուցիչներ չեմ տեսնում, ես այստեղ միայն պաշտօնակիցներ չեմ տեսնում, ես այստեղ տեսնում եմ բարեկամներ, ընկերներ, մի ընտանիքի անդամներ։ Սա ապացոյց է ձեր սեփական բնաւորութեան, ձեր պատուի՝ թերևս և սա ձեր ամենամեծ յաջողութիւնն է։

«Փոքր ինչ առաջ օրիորդ Ժէնէն—այս երիտասարդ աղջիկը ի՞նչ սիրելի ու սրտառուչ խօսքեր ասաց ձեզ.—Դուք գործում էք մեր դաստիարակութեան մասին նոյնչափ, որչափ և մեր ուսման մասին, մեր սրտի մասին, որչափ և մեր մտաւոր զարգացման մասին. դուք մեզ սովորեցնում էք միմեանց սիրել. մենք լիօնեան ընդարձակ ընտանիքի ծոցում՝ մեր ընկերներով ու պրոֆէսօրներով միասին մի մեծ ընտանիք ենք կազմում։—Միթէ հիանալի չէ՞ն այս խօսքերը։ Եւ որպիսի եռանդով ու որպիսի պարզասրտութեամբ էր նա արտասանում այս խօսքերը։ Եւ այս խօսքերն ունայն խօսքեր չէն, որովհետև այս րօպէիս պ. Մանժէնի ինքն էր ինձ ասում, որ Լօնի արուեստասիրական ուսումնարանի աշակերտներն իրանք էլ կիրակի օրերով ընթերցանութեան և գրութեան դասեր են տալի իրանցից պակաս գիտցող մշակներին։ Եւ այսպէս իւրաքանչիւր երեկոյ հանգստանալով իրանց օրական աշխատանքից՝ ձեր դասերը լսելով, նրանք կիրակի օրերով էլ հանգստանում են շաբաթվայ աշխատանքից ձեզ նմանելով։ Դա հիանալի և մի և նոյն ժամանակ սրտաշարժ է. շնորհակալ եմ ձեզնից, պարոններ. ես ձեզ շնորհաւորում եմ ոչ թէ իմ կողմից, այլ ես ձեզ շնորհաւորում եմ ֆրանսիական հայրենիքի և միաբանութեան զգացմունքի անունով, միաբանութեան, որը պէտք է հանրապետութեան հաստատ հիմք համարել։ (Կեցցէներ։)

«Դուք էլ մեզ հետ անում էք նոյնը, ինչ որ մենք ենք անում, միայն այն զանազանութեամբ, որ դուք ձեր արածի մէջ աւելի մեծ խոչնդոտների էք յաղթում քան թէ մենք, հետևապէս և ձեր արածը աւելի արժէք ունի քան թէ մերը։ Ես առաքեալներ էի պահանջում, ահաւասիկ առաքեալներ։ Այո՛, ձեր պրոֆէսսօրների հետ միասին ժողովրդական դաստիարակութեան առաքեալներ եղէք։ Արէք այդ ծառայութիւնը հանրապետութեանը, պատճառեցէք այս ուրախութիւնը հանրապետականներին։ Պրօպագանդ, քարոզութի՛ւն, եղբայրսիրութի՛ւն։ Ազատութեան հետ միասին լոյս սփռեցէք։ (Կեցցէների և ծափահարութիւնների մի ահագին որոտմունք, որ տևում է մի քանի վայրկեան։)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Վան, 16/28 սեպտ.

Եթէ այսպէս շարունակուի, մի տարի վերջ Վանայ շրջակայ գիւղերու մէջ այլ ես հայ չը մնար և հայոց մեծամասնութիւնը որ միայն Վան կը գտնուի շուտով կը քչանայ, վասն զի անգղիական և ռուսական փոխ-հիւպատոսաց Վան մտնելէն անմիջապէս ետք այնպիսի սոսկալի կերպով հարստահարութիւններ սկսան, որոյ նմանը միայն 1877-ին տեղի ունեցած էր որ պատերազմի տարի էր։ Երբէք օր կանցնէր որ գործ չը հասնի թէ այս ինչ և այն ինչ գիւղեր կողոպտուեցան, այսչափ հայ սպաննուեցաւ, այնչափ բռնութիւններ գործուեցան հայոց վրայ և այլն։ Գիւրդերն ամեն անգամ որ հայ մը կը կողոպտեն, միշտ կասեն թէ «գնա ռուսաց փոխ-հիւպատոսին (ըստ իրենց բառի կօնսուլ) բարև արա, իւր իսկ սիրուն այս բաներ կանենք որ ցուցնէ մեզ իւր տէրութեան զօրութիւնը։» և այլն։ Ռուսական և անգղիական փոխ-հիւպատոսներն աւելի քան կառավարութեան դուռը բազմաթիւ կը լեցուին երբեմն. զի ամեն կողմանէ հարստահարուածները կը վազեն նոցա մօտ բողոքելու, սակայն կառավարութիւնը բնաւ փոյթ չը տանիր չարեաց առաջքն առնելու։ Պայազետի բանակին մէջ բազմաթիւ քիւրդ կամաւորաց հրամանատար եղող Շէյխ Նուրէտտին այս մի ամիս է որ յայտնապէս ապստամբած է կառավարութեան դէմ և իւր շրջակայ բոլոր հայ գիւղերը յոգիս ապատան կացուցեր է, ոչ ուտեստ ոչ հագուստ թողած է նոցա մօտ, ամեն բանէ զրկեր է և անթիւ չարիք գործեր է։ Այն աստիճան խռովայոյզ և տագնապալից է յիշեալ Շէյխի շրջապատ եղող գաւառաց վիճակը, որ անգղիական փոխ-հիւպատոս պ. Գլէյթէն չը համարձակեցաւ Ճուլամերիկ Ասորոց մէրշը մամին (կաթողիկոս) քով գնալ, զի Կուսակալ փաշան չը կրցաւ երաշխաւորել այդ ճանապարհորդութեան ապահովութեան մասին։ Պ. Գլէյթէի նէրշը մանին երթալու նպատակը անգղիական կառավարութեան կողմանէ քաղաքական յարաբերութիւն մը կազմել է. կասեն, զի մէրշը մանը բոլոր Ասորոց կաթողիկոսն է որը Նեստորական լինելով անգղիական եկեղեցւոյն դաւանակից կը համարին զիրենք։ Ասորիք թուով 80 հազար են և լեռնարնակ քաջ ժողովուրդ են։ Ապստամբ քիւրդերու մօտ մարթինի, չասպօ և այլ ասպիսի տակէն լեցուող հրացաններ կը գտնուին անսպառ փամփուշտներով և ուրիշ ռազմամթերքներով զորս պատերազմի տարին կառավարութենէն ստացած են և զորս հետզհետէ կը ստանան, ընդհանրութեան կարծեաց նայելով դարձեալ կառավարութենէն, որ համար կարծիք կայ թէ Բ. Դռնէն հրահանգ ընդունած է այս մասին։ Կարնէն և այլ զանազան տեղերէ առնուած տեղեկութիւնները զորս կընդունեմք, ստեպ կը հաստատեն թէ Բ. Դուռը մանաւոր հրահանգ խրկած է գաւառները որ Հայաստանի գոյութիւնը ջնջելու համար հայերը շուտով ջնջեն, մինչև իսկ կը թուին հաստատել թէ Շէյխ Նուրէտտինի ապըստամբութիւնն ալ կառավարութեան թելադրութեամբ եղած է, վասն զի մինչև ցարդ պէտք եղած չափով զօրք չը խրկուեցաւ Շէյխին դէմ և դեռ չը լսուեցաւ որ յիշեալ Շէյխն մի տաճիկ կամ քիւրդ գիւղ ալրած լինի, այլ ամեն վնաս միայն հայոց կը հասցունէ։ Քաղաքական ներկայ կացութեան տեղեակ եղողները դիւրաւ կրնան համոզուիլ այս բանի հաւանականութեանը. վասն զի Բ. Դուռը բնականապէս կը ցանկայ այս կողմերը Քիւրդիստան տեսնիլ, քան Հայաստան, հետեւապէս դժուար չը պիտի երևայ նմա քիւրդերու ինքնավարութիւն մը տալ Հայաստանի մէջ, որպէս զի բոլորովին ոչնչանայ Հայաստանը։ Այս կարծիքը այնչափ ընդհանրացած է այստեղ որ այլ ևս վիճելի լինելէ դադրած է։ Մինչդեռ կը յուսայինք Պերլինի դաշնադրէն օգուտ տեսնել, ընդհակառակն մեր հայրենիքը Քիւրդիստան փոխուելու վտանգը կը տեսնեմք։ Քանի որ մտածեմք այնչափ ցաւալի բաներ կը գան մեր միտը։ Ես չուզեցի հարստահարութեանց նկարագիրն անել, զի շատ անգամ լսուած են անոնք և դարձեալ նոցա կրկնութիւնն են որ նորոգուած են այժմ. հարստահարութեանց ամենասոսկալի տեսակէն սկսեալ մինչև ամենաթեթև տեսակն կը գործադրուի այժմ. քաղաքէն 1 ժամ հեռի ապահովութիւն չը կայ գնալու։ Ամեն քիւրդի մօտ եղած հրացանը կառավարութեան հրացաններ են. եթէ սոքա գաղտնապէս կառավարութենէն իրենց տրուած չէ, ապա ուսկից ինկած են նոցա ձեռքը։ Կուսակալ փաշան մեծ հրճուանք կը զգայ, երբ լսէ թէ հայ գիւղ մը ալ փճացաւ աւարառութեամբ։ Եթէ գիւղացիք բողոքեն, զինուոր մը անգամ չը տար որ քիւրդերու ետև արձակին։ 11 օր առաջ երբ Ցարման գիւղի վրա յարձակեցան քիւրդեր, որք թուով 20 էին, գիւղացի հայերն դիմադրել ելան, բայց որովհետև քսան քիւրդերուն մօտ ալ Մարթինի հրացան կար, յաղթուեցան հայերն։ Հետևապէս գիւղին բոլոր ոչխարներն յափշտակուեցան։ Եթէ կառավարութիւնը հայոց ալ Մարթինի հրացան տուած լինէր, անշուշտ կը յաղթէին նոքա։ Բայց թող այդ ալ չընէ, բաւական է որ լոկ հրաման տայ հայոց զիրենք պաշտպանել, այլ այնուհետև ամեն բան կը վերջանայ։ Բերլինի դաշնադրի 61 յօդուածը ինքնին կը գործադրուի։ Ի զուր են ամեն տեսակ ջանքերը, աւելորդ են եղած ծախքերը բարենորոգութիւնները մտցունելու համար, եթէ միմիայն արտօնութիւն տրուի հայոց զիրենք պաշտպանել. այդ կարժէ ամենը. բայց դժբաղդաբար կառավարութիւնը վերջին ատենան կը նեղէ հայ մը, եթէ տաճիկ մը սպաննած լինի։ Ինչպէս որ օրինակներ յայտնի են։ 14 տարի առաջ մի Էրէմբուրցի հայ տաճիկ մը սպաննեց իւր անձը պաշտպանելու համար։ Այդ խեղճ հայը մինչև ցարդ կը տառապի և դեռ ազատուած չէ, դորա հակառակ անթիւ տաճիկներ և քիւրդեր կան որք տասնաւոր հայերը սպաննած լինելով մէկ տեղ դեռ բանտ չը դրուած ազատեցան, կամ ամենէն շատ իրենք ամենաթոյլ բանտարկութիւն մը կրեցին։ Ասկէց 4 ամիս առաջ Արճէլ գաւառի մէջ հայ մը զարկաւ պարսիկ մը սպաննեց որ զինքն պիտի սպաննէր, այժմ այնպիսի սոսկալի տանջանք բանտի մատնուած է, որ գիւղացոց զարհուրանք կը պատճառէ։ Այսպիսի պատճառներ կան որ հայոց ձեռքը չը վերցուիր օտարին վրա։ Գլխաւորապէս երկու են պատճառներ որ հայեր չեն դիմադրեր քիւրդերու, նախ զի կառավարութիւնը սոսկալի կերպով կը պատժէ այնպիսիներին, երկրորդ զի հայկղերն ղեռ մեղք կը համարի թշնամին սպաննել, այլ կը պատուիրէ ներող և համբերող լինել, և ամեն բան Աստուծոյ դատաստանին յանձնել։ Վերցուր այս երկու պատճառներն և ահա պիտի տեսնես որ գարադաղցիք զիւցազնութիւն դաս առնել պիտի գան հայերէն։ Եւ այն ատեն քիւրդերու մեծ մաս մը հայ պիտի դառնայ երբ զանոնք ազատ և աներկիւղ տեսնէ։ Ուրեմն կը խնդրեմք մասնաւորապէս ամեն անունցմէ որոց կրնայ այս տեսակ պարագայից մէջ ազդեցութիւն բանեցունել, թող բարեհաճին հարկ եղածը ի գործ դնել, այն է ստանալ պաշտպանութեան հրաման և ցրել յիշեալ մահացուցիչ գաղափարն

Այն ծուռ գաղափարն որ ամեն երկրի մէջ տարածուել է իբր թէ հայերն զէնք բռնող ժողովուրդ չեն կրնար լինել, շատ շուտով պիտի փարատուի, եթէ մեր նշանակած երկու բաներն կատարուին։ Եթէ հայերը զինուորական ազգի մը յատկութիւն չունեն, պէտք է որ ամեն տեղի հայերն ալ այդ յատկութիւնէն զուրկ լինէին. ուրեմն ինչ է պատճառ որ այլ և այլ տեղերը քաջ և զինակիրթ հայեր կը գտնվին, որք իրենց դրացի ազգաբնակութեանց սարսափ կազդեն, պատճառն ուրիշ բան չէ, բայց այս՝ որ այնպիսի տեղերը կառավարութիւնը շատ ազդեցութիւն մը չունի, զօրօրինակ Կարին, և կամ կղերն թշնամին ըսպաննել մեղք համարած չէ, և օրինակ Զէյթուն, ուր եպիսկոպոս մը իւր ժողովրդեան գլուխը անցած էր և նորա վրա զոհ եղաւ, բանտ մտաւ, տանջանք կրեց և այլն։

Հայաստանը հայոց հայրենիքն է և պիտի հայոց տրուի, այս հաւատն ունենք մեք. ունին և բոլոր Հայաստանցի հայերը, և անշուշտ մի օր պիտի լինի այդ, սակայն ջանք որ շուտ կատարուի այդ բան։ Եւ որպէս զի շուտ կատարուի այդ բան, պէտք է 1. հայոց համար զիրենք պաշտպանելու հրաման ստանալ ուստի անկէ։ 2. Վերցնել ժողովրդեան մէջէն այն տգէտ կղերները, որք դեռ կը քարոզեն թէ թշնամի սպաննել մեղք է։ Վերջնոյն համար Կ. Պոլսոյ պատրիարքարանի ուշադրութիւնը կը հրաւիրեմք, իսկ Էջմիածնի համար խօսք չեմք ուզեր ասել, զի նա 1600-ի մէջ է որ կապրի, ներկայիս համար չէ։ Առաջնոյն համար ալ անոնց ուշադրութիւնը կը հրաւիրեմք որք հայոց բարեկամութեան համար կը խօսին կամ կը գրեն, կամ կը գործեն։ Ռուսական հիւպատոսաց կամ փոխ-հիւպատոսաց որք կը նստին այլ և այլ քաղաքները, եթէ մանաւոր հրահանգ տրուի ռուսաց բարեխնամ կառավարութենէն պահանջել թուրք կառավարութիւններէ չը նեղել այն հայերը, որք զիրենք պաշտպանելու համար զէնք վերցուցած լինին, յայնժամ ամենամեծ բարիքը՝ զոր կը յուսան հայերը ռուս հիւպատոսներէ, այդ կը լինի։ Զենք ուզեր զէնքի համար ոչ վառօդ, ոչ գընտակ, այլ միմիայն զէնք գնելու և ազատութիւն գործածելու հրովարտակ։ Զենք ասիր մեզ զէնք սրել քարոզեցէք, այլ զէնք գործածելն մեղք մի համարէք, մեզ համար բաւական են դոքա, զայդոսիկ կը փնտռենք, զայդոսիկ կը խնդրենք։

***

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր հեռագիրները շատ ուշ եկան, այնպէս որ համարը արդէն կազմված լինելով, չը կարողացանք տեղաւորել նրանց այսօրվայ համարի մէջ։

***

«Голосъ» լրագրին հեռագրում են Թիֆլիսից հետևեալը։ «Զարսից հոկտեմբերի 18-ից ստացած լուրերին նայելով, նահանգապետի ձեռքով փակած դպրոցները, նորից բացված են։»

Խմբագիր —հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՍԱՀԱԿ ՄԱՐՏԻՆԻՉ ՅՈՎԵԱՆՈՎ, ցաւելով յայտնում է իր ամուսին ԹԱԼԱԼ ԱՆՏՈՆՈՎՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՄԱՍԻՆ, խնդրում է բոլոր բարեկամներին և ծանօթներին ներկայ գտնվել յուղարկաւորութեան հանդիսին: Հինգշաբթի, նոյեմբերի 1-ին առաւօտեան 10 ժամին հանգուցեալին իր սեփական տանից, որ Կոլենիայում է գտնվում, տանելու են Կուկիայի Թանդոյեան Աստուածածնի եկեղեցին:

3—3

Զաքար Սերգէյիչ և Նատալեա Արտեմեվնա Նարիմանովները յայտնելով բարեկամներին և ծանօթներին իրանց որդի Սերգէյ Զաքարիչ Նարիմանովի մահուան մասին, խնդարհաբար խնդրում են նրանց պատուել հանգուցեալի յիշատակը ներկայ գտնվելով յուղարկաւորութեան հանդիսին: Շաբաթ նոյեմբերի 3-ին առաւօտեան 10 ժամին հանգուցեալին կը տանեն Մողնու Սուրբ Գէորգ եկեղեցին, սեփական № 3 տանից:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ «ԻՇԽԱՆ ԻՎԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎԻՉ ԲԱԳՐԱՏԻՈՆ-ՄՈՒԽՐԱՆՍԿԻ ԵՒ ԸՆԿ.»

Իշխան Իվան Կոնստանտինովիչ Բագրատիոն-Մուխրանսկի յայտնում է, որ իր հիմնած Առեւտրական տան բացումն և գործողութիւնները կը սկսվեն ներկայ տարվայ նոյեմբերի 1-ից: Առեւտրական տան ԳՐԱՍԵՆԵԱԿԸ գտնվում է Թիֆլիսում, Ռուսկի բազար հրապարակի վրա ՏՈՒՆ № 10

1—4

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Պաղեստինում աշխարհացոյցով.

Աշխատասիրութիւն Յարութիւն քահանայի Պօպովեանց. Գինն է 60 կոպէկ. 10-էն աւելի գնողների համար 50 կոպ.: Յանկացողք կարող են դիմել հետեւեալ հասցէով Въ Москву, Армянскій пер. д. Армянской церкви. Священнику Артемію Яковлевичу Попову.

1—5

ОТЪ

АДМИНИСТРАЦІИ ГАЗЕТЫ „ТРУДЪ“.

Контора Редакціи новой еженедѣльной русско-армянской политико-литературной газеты „Трудъ“ помѣщается на Головинскомъ проспектѣ, въ верхнемъ этажѣ зданія князя Багратіонъ-Мухранскаго, подъ № 22; входъ въ контору со двора, со стороны классической гимназіи. Къ выпуску перваго номера редакція приступаетъ въ декабрѣ мѣсяцѣ сего 1879 г., а потому гг. **подписчики съ минувшаго іюля** будутъ считаться вступившими въ число **подписчиковъ съ предстоящаго декабря**, если со стороны ихъ не будетъ, согласно уже неоднократно напечатанному объявленію, обратнаго востребованія состоявшагося взноса по первое число предстоящаго ноября. Контора открыта для подписки ежедневно, за исключеніемъ дней воскресныхъ, отъ 9 часовъ утра до часу по полудни. Личныхъ объясненій по дѣлу редакторъ въ обязательно-опредѣленные часы, до начатія изданія, на себя не принимаетъ. Годичные взносы **полностью** производятся напередъ и притомъ безъразсрочки.

ПЛАТА ВЪ ГОДЪ:

1) Подписчикамъ городскимъ:

Съ доставкою въ Тифлисѣ . . . р. с. 5—50.
Безъ доставки . . . . . „ „ 5— „

2) Иногороднымъ по Имперіи:

Съ пересылкою за счетъ редакціи. . р. с. 6— „
Внѣ Имперіи по международному тракту. . . . . „ „ 7— „

При каждой перемѣнѣ адреса дальнѣйшая затѣмъ обязательная доставка или пересылка газеты должна оплачиваться, сверхъ установленной платы, дополнительными 25-ью копѣйками.

На пол-года подписки не допускаются.

Органъ, при наличности пяти-сотъ подписчиковъ, будетъ издаваться весь годъ въ послѣдовательномъ порядкѣ въ величинѣ с.-петербургской газеты „Голосъ“.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Աշխատանք» լրագրի խմբագրութեան կողմից:

Նոր՝ «Աշխատանք» անունով ռուսա-հայ քաղաքագիտական-գրական շաբաթաթերթի լրագրութիւնը գտնվում է Գոլովինսկի պրոսպէկտի վրա, իշխան Բագրատիոն-Մուխրանսկու շինութեան վերին յարկում № 22. Կանտորայի (գրասենեակի) մուտքը գաւիթի՝ հայաթի կողմից է, Կլասիքական գիմնազիոնի դէմ առ դէմ: Խմբագրութիւնն առաջին համարը մտադրվում է հրատարակել սոյն թուի դեկտեմբերից. էդ պատճառով անցած յուլիս ամսուան էն բաժանորդները, որոնք յետ չեն պահանջելու իրանց տված տարեկան բաժանորդները մինչև առաջիկայ նոյեմբերի մէկը, կընդունվեն ինչպէս իսկական բաժանորդներ հրատարակման առաջին տարվայ համար: Խմբագրութեան գրասենեակը բաց է ստորագրութեան համար ամեն օր, բացի կիւրակէ օրերը, առաւօտի 9 ժամից մինչ մէկ ժամ կէսօրից յետ: Խմբագիրը անձնական բացատրութիւններ տալու պարտականութիւն յանձն չի առնում մինչ լրագրի հրատարակութեան օրը: Տարեկան բաժանորդագները պիտի լինին վճարուած առաջուց և միանուագ:

Տարեկան բաժանորդագինը.

1) Քաղաքացի բաժանորդներին.
Տուն հասցնելով Թիֆլիսի մէջ Ռ. Ա. 5—50
Առանց տուն հասցնելու « » « » 5— »
2) Օտար քաղաքացիներին Ռուսիոյ կայսրութեան մէջ.
Խմբագրութեան հաշուով ուղարկելով « » 6— »
Ռուսիոյ Կայսրութիւնից դուրս միջազգային դաշնադրութեան համաձայն . . « » 7— »

Իւրաքանչիւր՝ հասցէն փոխելուց յետ, պիտի խմբագրութեան հասցնեն, ինչպէս լուրթիւն, 25 կոպ. արծ. Կէս տարով ստորագրութիւն չի ընդունվում:

Լրագիրը մտադրվում է հրատարակել Պետերբուրգեան «Голосъ» լրագրի մեծութիւնով, ողջ տարին անընդհատ, հենց միայն բաժանորդագների թիւը կը հասնի 500-ի:

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԹԻՖԼԻՍ 1879

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՅ (Հոկտեմբերի 31-ին)	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	15
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1420	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1245	—
Վիդրէնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	235	—
Երկրորդ 5% Վիդրէնի »	230	—
Մարսելի կուրսը 270—	100	—
Լօնդոնի կուրսը Օդեսայի վրա	9	45
Վենայի կուրսը արժէ 121 գ.	100	—
Դաւրեժի բարաթը . . .	4	80
Առեւտրական բանկի ակցիան 200 մ.	310	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	—	—
Շաքարը բրօցկու . . .	7	30
» միւս տեսակը .	7	15
» չաքար աւազը. .	5	30
» տրանզիտը . . .	5	30
» մաքսը վճառած .	10	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից . . .	8	—
Միւս տեսակը հին սերմից.	7	40
Բուրդը թուշի. . . .	7	50
» թարաքամի . .	4	—
Աւիւրը Շորագալու . .	2	20
» Երևանի . . .	—	—
Գարին	1	40
Մոմը ընաճարպի (стеар.)	12	40
Մետաքսը Նուխվայ. .	180	—
Կախեթունը.	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	50	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	65	—
Կօֆէն մոկօի	26	—
« Լիւանի . . .	22	—
« Մանտինիյօն . .	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները .	1	
Ռուսաստան . . .	2	
Աւստրիա	3	
Անգլիա	4	
Գերմանիա. . . .	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդականների ընդունելութիւնը ցերեկվա և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Առանձին սենեակներում ամիսը 30—50 բուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 բուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան, Բժշկապետ Անանով:

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլօվո (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:

	առաւօտ:	երեկոյեան.
Թիֆլիսից .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվո. .	1. 29	11. 59
Ռիոն. . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	

	առաւօտ:	
Փոթիից. . .	9. 13	
Ռիոն. . . .	12. 13	
Միխայլօվո. .	5. 39	1. 37
Գօրի . . .	7. 5	4. 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ. .	90	68	38
Գօրի. . .	3.20	2.40	1.33
Սուրամ. .	5.22	3.92	2.18
Ռիոն . . .	9.	6.75	3.75
Փոթի. . .	13. 1	9.75	5.42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր: Բագուի տրակտից՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի: Բելիկովի տրակտից երեքշաբթի և շաբաթ:

ՆԱՄԱԿՆԵՐ	կոպ.
Բաց նամակ արժէ .	2
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ. .	7
Ամերիկա	7
Պարսկաստան . . .	7
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս . . .	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 9-ից մինչև 1 ժամը:

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւնների, Քուչարեանց վիրաբուժական և աչքի հ., Բաբաեվ Ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկէվիչ վիրաբուժական հ., Ռէյխ աչքի հ., Վերմիշեվ ներքին հ., Ժուրավլէվ վենէրական և կաշու հ., Բաբով կրծքի և ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Աստուածատուրով կանանց հ.:

Հինգշաբթի. Վերմիշեվ և Ռուդկովսկի ներքին հ., Քուչարեանց սիֆիլիսի և մզային գործարանների հ., Ժուրավլէվ Ջղային հ.: Բաբով կրծքի և ներքին հ.:

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբաժական հ., Բաբաեվ Ջղային և հոգեկան հ., Աստուածատուրով վենէրական և կաշու հ.:

Շաբաթ. Վերմիշեվ ներքին հ., Ռէյխ աչքի հ., Ժուրավլէվ վենէրական և կաշու հ., Բաբով կրծքի և ներքին հ.:

Օբրէխտ, ատամի հ., ընդունում է իր տանը ամեն ժամանակ աղքատ հիւանդներին Բժշկանոցի տոմսակով:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԱ. ***. Նամակը թղթակիցների մասին կը տպենք հետևեալ համարներից մէկի մէջ: Պատկերի մասին դեռ ոչինչ չենք կարող պատասխանել:

—ԱԽԱԼՔԱԼԱՔ. Բ. Պ. Նամակը կը տպենք հետևեալ համարներից մէկի մէջ:

—ՀԻՆԵՆԱԻԶԵԻԱՆ. Ճ. Նամակից լուր քաղեցինք, ճնացածը չարժէր տպել:

—ՂԱՐՍ. Զ. Զ. Ձեր յօդուածը տպագրութեան համար անյարմար է: Այդպիսի միջոցներով չէ կարելի գործին օգնել: Հաղորդեցէք մեզ լուրեր: Ոչ մի նամակ չենք գցի զամբիւղը, որի մէջ գոնե մի լուր կայ: Լուրերը անպատճառ տպում ենք.

—ԻԳԴԻՐ, Տ. Ի՞նչ յարաբերութիւն ունեն հնութիւնները բարեգործական նպատակով բացած ստորագրութիւնների հետ:

Дозволено Цензурою 31 Октября 1879 г. Тифлисъ.

Տպարան Ա. Ա. Միխելսոնի

Типографія А. А. Михельсона